Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-544[5]-18.06.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Անկախ սույն մասի դրույթներից, անհատ ձեռնարկատեր և (կամ) նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի անշարժ գույքի վարձակալությունից ստացված եկամուտների հանրագումարն ընթացիկ տարում 58.35 մլն. դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասից հարկ վճարողի կողմից տարեկան հաշվարկվում է եկամտային հարկ 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները և հարկային գործակալի միջոցով հաշվարկված ու պահված հարկի գումարները, իսկ հարկային գործակալ չհանդիսացող անձանցից եկամուտներ ստանալու դեպքում՝ հաշվի չառնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները և ֆիզիկական անձի կողմից գույքի վարձակալությունից ստացված եկամուտներից ինքնուրույնաբար հաշվարկված հարկի գումարները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից: